ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. ապրիլի 27 N 103 - Ա

ՄԱԼԽԱՍ ՇԻՐԻՆԻ ԱԼՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՎՇԵՆԻ ՄԱՔՍԻՄ ԽԱՄՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը և Մ. Ալոյանի 2017 թվականի ապրիլի 27-ի դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2017 թվականի ապրիլի 27-ից Մալխաս Շիրինի Ալոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ավշենի Մաքսիմ Խամոյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ